



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Շրջակա միջավայրի կենսաբանական աղտոտումը կապված է էկոհամակարգերի մեջ օդաբ օրգանիզմների ներխուժման (ինչպես նաև մարդու կողմից) և դրանց արագ բազմացման հետ: Այդ օրգանիզմների խմբին են դասվում ախտածին միկրոօրգանիզմները (բակտերիաներ, վիրուսներ), կենդանական և անթրոպոգեն ծագման պայմանական-ախտածին միկրոօրգանիզմները, մակաբույծները (լյամբլյա, դիզենտերիայի ամեոբաներ, սակարիդներ և այլն), ոչ ախտածին միկրոօրգանիզմները (կենսաբանական ակտիվ միացությունների պրոդուցենտներ), ֆիտոպլանկտոնը (որոնք զարգանում են ջրավազաններ մուրք գործող սննդադրարների, հիմնականում՝ նիտրատների և ֆոսֆատների ավելցուկի հետևանքով):

Կենսաբանական աղտոտիչների կարգավորման հիմքում ընկած գլխավոր սկզբունքը վերաբերում է համաձարակաբանական անվիրանգությանը (ինֆեկցիոն հիվանդությունների հարուցիչների՝ բակտերիաների, վիրուսների, մակաբույծների բացակայությանը): Ըստ այդ սկզբունքի՝ հասարակվել են խմելու, քաղցրահամ և ծովի ջրերի, կենտրոնացված ջրապահովման աղբյուրների, լողավազանների և հոսքաջրերի, հողի վիճակի միկրոկենսաբանական որակի նորմատիվներ: **Հողի** առավել ինտենսիվ միկրոբային աղտոտումը կապված է հողադրարածքներում բոժոճման նպատակով օգտագործվող փոսֆատական-կենցաղային հոսքաջրերի հետ:

Մթնոլորտային օդը սովորական պայմաններում ախտածին վիրուսային և բակտերիալ ինֆեկցիայի տարածման գործում որևէ դեր չունի: Օդային ինֆեկցիայի տարածման օջախ է փակ տարածությունների օդը, և առաջին հերթին հիվանդանոցային օդը, որտեղ միկրոբային աղտոտման նորմատիվներ հասարակված են միայն վիրահատական բաժանմունքների և ծննդարների համար:

Ֆիզիկական միջավայրն իրենից ներկայացնում է տարբեր բնույթի գործոնների միագումար, որոնք օրգանիզմի վրա ունեն էներգետիկ ազդեցություն: Ֆիզիկական գործոնները կրում են էներգիայի տարբեր ձևեր, որոնցից են առաձգական տարանումների էներգիան (աղմուկը, վիբրացիան, ուլտրաձայնը և ինֆրաձայնը), իներցիոն ուժերը (արագացում), էներգետիկ դաշտերը (գրավիտացիոն, էլեկտրական, էլեկտրամագնիսական),

ռադիոակտիվ և տիեզերական ճազման մասնիկների հոսքերը: Դրանց համար չափաբաժին է հանդիսանում արտահայտվածության որոշակի մակարդակը: Դրանք են՝ նվազագույն անհրաժեշտ մակարդակ (ՆԱՄ), օպտիմալ մակարդակ (ՕՄ) և սահմանային թույլատրելի մակարդակ (ՍԹՄ): Բանի որ ներկայումս, որպես կանոն, դիտվում է ֆիզիկական գործոնների ազդեցության աստիճանի բարձրացում, ապա ամենամեծ նշանակությունը ստանում է ՍԹՄ-ի կարգավորումը: